

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՍԱՆ ՓԱՌԻԵՐ ՍՈԼԱՐ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԱՆ ՓԱՌԻԵՐ ՍՈԼԱՐ ԱՎԱԶԻ ԵՐԵՎԱԿՈՒՄՈՒՄ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆԴԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՀԱՅՏ



Ն. Հաբությունյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1. Նախադասվող գործունեության անվանումը և նպատակը	5
1.2. Նախադասվող գործունեության բնութագիրը	9
1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	10
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	15
2.1. Հայցվող փարածքի տեղադիրքը	15
2.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր, սողանքներ	18
2.3. Շրջանի կլիման	22
2.4. Մթնոլորտային օդ	25
2.5. Զրային ռեսուրսներ	26
2.6. Հողեր	30
2.7. Բուսական և կենդանական աշխարհ	31
2.8. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող փարածքներ	35
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	39
3.1. Ենթակառուցվածքներ	39
3.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	41
3.3. Պատմության, մշակութային հուշարձաններ	44
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	45
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	48
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	51
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ	53
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	56
Բնապահպանական միջոցառումների ծրագիր	57

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ընդերք՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հափակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մարչելի է ընդերքօգտագործման համար:

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները:

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտումն գնահատում:

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում:

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին:

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական

առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանակա ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Արարատի մարզի Սան փառեր սոլար ավազի երևակուման տարածքում նախատեսվում է իրականացնել ավազի կուրակի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Սան փառեր սոլար ավազի երևակումը գտնվում է Արարատյան իջվածքի հարավ-արևելյան մասում:

Շրջանի երկրաբանական կառուցվածքի հիմնական տարրերը ներկայացված են Ա.Թ.Վեհունու և Ռ.Կ.Խաչատրյանի կողմից կազմված 1:50000 մասշտաբի քարտեզում (նկ. 1), ըստ որի երևակման հարակից շրջանում տարածված են հիմնականում պալեոզոյի նստվածքային, մետամորֆային, վերին օլիգոցեն-ստորին միոցենի նստվածքային, չորրորդական հասակի ալյուվիալ-լճային և ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները:

Ապարների շերտագրական կտրվածքը հետևյալն է (ներքևից վերև):

Պալեոզոյ: Դևոն: Ուսումնասիրվող շրջանի ամենահին ապարները ներկայացված են վերին դևոնի հասակի ուժեղ մետամորֆացված կրաքարերով, կավային թերթաքարերով ու քվարցիտներով, որոնք պատկանում են դիաբազ-պորֆիրային դայկաներով: Նշված ապարները մերկանում են Ուրծի լեռնաշղթայի արևմտյան լանջին և 100 մ բարձրությամբ բլուրներում (Արարատ, Խորվիրապ) և ծածկվում են Արաքս և Վեդի գետերի հովիտների ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներով: Վերին դևոնի մետամորֆային ապարները հանդիսանում են Մերձարաքսյան տեկտոնական միավորման մերկացված հիմքը: Ընդհանուր հզորությունը հասնում է 250 մ-ի:

Կարբոն: Ներկայացված են ստորին կարբոնի հասակի էպրենյան և վիզեյ-տուրենյան հարկերի բիտումացված կրաքարերով, քվարցիտներով, թերթա-քարերով և ավազաքարերով, որոնք ներդաշնակորեն նստած են վերին դևոնի հասակի մետամորֆային ապարների վրա և տարածված են Ուրծի լեռնաշղթայի արևմտյան լանջին: Ընդհանուր հզորությունը հասնում է 400-450 մ-ի:

Պերմ: Վերը նշված ապարների լվացված մակերեսին անկյունային աններդաշնակությամբ նստած են ստորին պերմի հասակի ապարները, որոնք ներկայացված

են ամուր, միջնախոշորահատիկ, մուգ մոխրագույն բիտումացված կրա-քարերով, քվարցիտների ենթաշերտերով: Մերկանում են Ուրծի լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջում՝ 400-450 մ ընդհանուր հզորությամբ:

Մեզոզոյ: Այս ժամանակաշրջանի առաջացումներն ուսումնասիրվող շրջանում ներկայացված են վերին կավճի հասակի՝ տուրոնի, կոնյակի և վերին սենոնի հարկերով, որոնք տարածված են Վեդի գետի միջին հոսանքում: Հիմնականում մերկանում են անտիկլինային ծալքերի թևերում: Ստորին մասը ներկայացված է հրաբխանստվածքային, իսկ վերինը՝ ծովային կավակրաքարային առաջացումներով: Բերված քարտեզի սահմաններում բացակայում են:

Ստորին Էոգեն: Ունի սահմանափակ տարածում, մերկանում է անտիկլինային ծալքերի թևերում: Ներկայացված է կրաքարերով, ավազաքարերով և կրաքարային կոնգլոմերատներով:

Վերին օլիգոգեն-ստորին միոգեն: Ներկայացված են դրանք կարմրավուն խայտաբղետ կավերով, ավազաքարերով ու կոնգլոմերատներով: Դրանք լայն տարածում ունեն Վեդի գետի միջին հոսանքում և դրա ծախ վտակ Շաղափի հովտում (Շաղափի սինկլինալի թևերում), ինչպես նաև Ուրծի լեռնաշղթայի լանջերում, ունեն հյուսիս-արևելյան անկում 10-20° և անկյունային աններդաշնա-կությամբ նստած են կավճի և պալեոզոյի հասակի ապարների վրա, իսկ դեպի հարավ արևմուտք ծածկվում են ստորին չորրորդականի տրավերտիններով և Վեդի ու Արաքս գետերի ժամանակակից նստվածքներով:

Խայտաբղետ շերտախմբի ընդհանուր հզորությունը չի գերազանցում 100մ:

Չորրորդական համակարգ:

Ուսումնասիրվող շրջանում այս համակարգին են վերագրվում ստորին չորրորդականի կրաքարային տուֆերը, տրավերտինները, որոնք լայն տարածում ունեն Ուրծի լեռնաշղթայի հարավ-արևմտյան նախալեռնային մասում և զբաղեցնում են մի քանի տասնյակ քառակուսի կիլոմետր մակերեսով տարածք: Տրավերտինների հզորությունը հասնում է մինչև 45 մ-ի:

Նկարագրվող կտրվածքը եզրափակվում է վերին չորրորդականի Արարատյան դաշտավայրի ստորին լճա-ալյուվիալ դարավանդի նստվածքներով ու ժամանակակից ալյուվիալ-արոլյուվիալ և դելյուվիալ նստվածքներով:

Վերին չորրորդական: Արարարյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր նստվածքներ: Արաքս գետի լճա-ալյուվիալ նստվածքների հզորությունը հասնում է մինչև 70 մ, ինչը վկայում է դրա ինտենսիվ ակումուլյատիվ-էրոզիոն գործունեության մասին: Երևակման շրջանում Արաքս գետի և դրա վտակների դիրքը հաճախ չի համընկնում ժամանակակից հունին և տեղաշարժված են դրանց նկատմամբ 2-ից մինչև 10 կմ չափով: Տեղաշարժման այդպիսի ամպլիտուդան վկայում է Արաքս գետի ինտենսիվ մեանդրագեներզի և փոխար առաջացումների լայն զարգացման մասին:

Ժամանակակից ալյուվիալ, դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները ներկայացված են գլաքարերով, ավազակավերով, ավազներով և հիմնականում տարածված են Արաքս և Վեդի գետերի հովիտներում:

Ուսումնասիրվելիք Սան փաուեր սոլար ավազի երևակման ակումուլյատիվ հունադարավանդային հարթավայր ներկայացնող ամբողջ տարածքը, որն առաջացել է Արաքս գետի արդյունքում, զբաղեցնում են Արաքս գետի ներկայիս հունից 5-ից մինչև 7 մ բարձրություն ունեցող Արարարյան հարթավայրի ստորին լճային դարավանդի նստվածքները: Վերջինիս աստիճանները հղկված են և առաջացնում են դեպի գետահունը մեղմաթեք հարթավայր (Գծ. հավելված 1):


Դրավանդները կազմված են հիմնականում լճա-ալյուվիալ փոխար բեկորային առաջացումներից, որոնք ներկայացված են ավազներով, կոպճային տարահատիկ ավազներով, որոնք երբեմն ներփակում են տղմակավային մանր ենթաշերտեր և ոսպնյակներ: Դրանց հզորությունը, երևակման հարակից մասերում ձկնաբուծա-կան նպատակներով հորատված հորատանցքերի տվյալներով, կազմում է 3-6 մ:

Ավազակուտակը հիմնատրակվում է կավերի ու կավաավազների շերտով:

Մակաբացման ապարները ներկայացված են բարակ հողաբուսական տղմակավային շերտով և 0.7-2.5 մ հզորության կավավազային նստվածքներով:

Երևակումը ըստ առաջացման պատկանում է ալյուվիալ տիպին, տեղադրված է Արաքս գետի վերինային առաջին դարավանդում:

Հետախուզվող տեղամասի օգտակար հանածոյի մարմինը իրենից ներկայացնում է հորիզոնականին մոտ տեղադրված շերտաձև ավազակուտակ, որը համաձայն Ավազի և կոպճի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի վերագրվում է 1-ին խմբին:



1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմված է նկատի ունենալով հետախուզվելիք երևակման պարզ երկրաբանական կառուցվածքը (1-ին խումբ), չափսերը (37.4 հա), տեղանքի հարթ ռելիեֆը, օգտակար հանածոյի ակնկալվող շերտաձև մարմնի ոչ մեծ հզորությունը, ինչպես նաև «Ավազի և կոպիճի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» հանձնարարականները:

Վերոհիշյալի հաշվառմամբ հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մինչև 7 մ խորությամբ 25 հետախուզահորերի միջոցով, ընդհանուր 175 մ ծավալով: Ընդ որում հետախուզվող տարածքում ձևավորված հետախուզական ցանցը թույլ կտա երևակման հարավ-արևելյան մասի պաշարները հետախուզահորերի միջև մոտ 130 մ հեռավորությամբ, գնահատել ըստ A կարգի, իսկ հյուսիս-արևմտյան մասը փորվածքների միջև 170-ից 245 մ գնահատել ըստ B կարգի:

Ծրագրված աշխատանքների իրականացումը թույլ կտա տալ օգտակար հանածոյի որակական և քանակական գնահատականը, իսկ հետախուզված պաշարները գնահատել ըստ արդյունաբերական A+B կարգերով, մոտ 56% և 44% հարաբերակցությամբ: Սան փառեր սղար ավազի երևակման տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքներ.

- 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել նույն մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 37.4 հա տարածքի վրա բոլոր փորվածքների գործիքային տեղադրմամբ տոպոհիմքի վրա:

- ֆոնդային, հրատարակված նյութերի, ԳՈՍՏ-երի և մեթոդական ցուցումների ուսումնասիրություն,

- մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով III կարգի ամրության ապարներում 1.5 մ² կտրվածքով 25 հետախուզահորերի անցում՝ 175 գծ.մ ընդհանուր խորությամբ :

- երկրաբանական փաստագրում՝ 100 մասշտաբով,

- ծավալային զանգվածի որոշում դաշտային պայմաններում,

- ֆիզիկամեխանիկական ուսումնասիրությունների նպատակով հետախուզահորերից նախատեսվում է վերցնել 25 նմուշ ակոսային եղանակով մեկական

յուրաքանչյուր փորվածքից: Նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզահորի պարից, օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ, ավազակուրակի հզորությունը ակնկալվում է մինչև 4-5 մ, ակոսի 5x10 սմ կտրվածքով:

- քիմիական կազմի ուսումնասիրություն լաբորատոր պայմաններում՝ 5 նմուշ,
- միներալոգո-պետրոգրաֆիական ուսումնասիրություններ՝ 3 նմուշ,
- ռադիոմետրիական ուսումնասիրություններ СРП 68-01 սարքով,
- հետախուզահորերի հետ լցում և տարածքի փխրեցում,
- աշխատանոցային աշխատանքներ, պաշարների հաշվարկմամբ հաշվետվության կազմում:

1.3.Նախագծման նորմատիվ-իրավական հենքը

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

ՀՀ Զրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և

պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պեղական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պեղական քաղաքականությունը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պեղական քաղաքականության իրավական հիմունքները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պեղական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական

ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների

տարածքների սահմանման չափորոշիչները:

ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի,

ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերքագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը,

ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն որոշում, որը սահմանում է ընդերքագործման թափոնների կառավարման և ընդերքագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքագործման թափոնների կառավարման և ընդերքագործման թափոնների վերամշակման միջոցառումները:

ՀՀ կառավարության 17.08.2017թ.-ի N990-Ն որոշում, որը սահմանում է ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:

ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը հաստատելու մասին» N18-Ն որոշում:

ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որը սահմանում է ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները հաստատելու մասին» N396-Ն հրաման:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1. Հայցվող տարածքի տեղադիրքը

Արարատի մարզի Սան փառեր սոլար ավազի հետախուզվող երևակման հայցվող տարածքը վարչատնտեսական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզում Սուրենավան գյուղից 3.0 կմ հարավ-արևմուտք, Արաքս գետի ներկայիս հունից 2.5 կմ հեռավորության վրա (Նկ. 2, 3): Այն հարում է Արարատյան դաշտավայրի մերձ-արաքսյան գոտում լայնորեն տարածված ալյուվիալ-լճային նստվածքներին: Տեղամասին մոտեցող գրունտային ավտոճանապարհը բարեկարգ է, նորոգման կարիք չունի:

Հայցվող տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

- հյուսիսային լայնությունը՝ 39° 45'45"


- արևելյան երկայնությունը՝ 44° 45'45"

Երևակման հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատներն են

WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգով.

- | | |
|---------------|------------|
| 1. X- 4402881 | Y- 8479728 |
| 2. X- 4403138 | Y- 8479437 |
| 3. X- 4403745 | Y- 8479322 |
| 4. X- 4403858 | Y- 8479422 |
| 5. X- 4403277 | Y- 8480083 |


Երևակումը գտնվում է 795-800 մ բացարձակ բարձրությունների վրա և զբաղեցնում է 37.4 հա տարածք:



Նկար 2

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

84-10-38-006-4-1-3



Նկար 3.

Հայցվող տարածքի շրջանում քաղաքներն են Արարատը և Վեդին: Արարատ քաղաքի տնտեսության մասնագիտացման ճյուղը ծանր արդյունաբերությունն է: Այստեղ գտնվում է հանրապետության երկու ցեմենտի գործարաններից մեկը: Արարատում է գտնվում ոսկու կորզման ֆաբրիկան: Քաղաքում կան նաև գինու-կոնյակի և պահածոների արդյունաբերության ձեռնարկություններ, որտեղ արտադրվում է գինի, կոնյակի սպիրտ, մրգերի, բանջարեղենի պահածոներ: Ունի զարգացած գյուղատնտեսություն: Այստեղ գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն խաղողի, պտղատու այգիները, վարելահողերը:

Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև կաթնամսատու ուղղության անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Վեդի քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսպատման նյութերի, էլեկտրական հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է:

2.2. Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ բնութագիր, սողանքներ

Երկրաբանական տեսակետից շրջանը կազմված է վերին պլիոցեն-պլեյստոցենի հասակի լճային, գետային, հեղեղային նստվածքներով: Նստվածքների ստվարաշերտը իր հերթին ծածկված է չորրորդական հասակի ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներով: Այս նստվածքները զարգացած են գոգահովիտներում, Արաքս գետի հովտում և ներկայացված են մագմայական և նստվածքային ապարների կոպրագլանված բեկորներով, ինչպես նաև կավերով, կավավազով, ավազներով:

Երկրաձևաբանական տեսակետից երևակման տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°:

Երկրաձևաբանական տեսակետից տեղամասի տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայր: Բարձրությունը տատանվում է 800-1000մ-ի սահմաններում, բուն տեղամասի տարածքը՝ 810-820մ: Արարատյան գոգավորությունը նեոգեն, չորրորդականի գոգածալքային-գրաբենային

բարդ կառուցվածք՝ տրոհված բազմաթիվ երկրասարդ խզումներով: Գոգավորության հիմքի բեկորային կառուցվածքները ուշ պլիոցենում ենթարկվել են գետերի էոզիոն մասնալուծման, որոնք վաղ չորրորդականում լցվել են 100-300մ հզորությամբ լավահոսքերով: Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգավորություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հալվածում արգելափակել են Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածքները:

Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է ժամանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովիտաբաժնի կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների:

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկարներ 4 և 5-ում:

Լեռնաշղթան ասիմետրիկ է, հարավ-արևմտյան լանջերը կտրուկ իջնում են դեպի Արարատյան դաշտը, իսկ հյուսիս-արևելյան հալվածը մեղմաթեք սփռվում են դեպի Շաղափի անտիկլինալային հովիտը:



ՈՆԼԻՆԵՆԻ ՉԵՎԱԳՐԱԿԼՆ ՏՐՊԵՐ ԵՎ ՉԵՎԵՐ ՏՐՊԵՐ

- | | |
|--|--|
| Չափափ, ուղիղ լանջերով, աստիճանակերպ կատարով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված | Ափստվոր, դարավանդավորված |
| Անհամաչափ, աստիճանակերպ լանջերով, V-աձև հովիտներով և կիրճերով խոր մասնատված | Դարավանդավորված, մասամբ մասնատված ձորակներով |
| Չափավոր զառիթափ-գոգավոր լանջերով, մասնատված հովիտաձորակային ցանցով | Հորիզոնականին մոտ, մասամբ դարավանդավորված, բույլ ափստվոր (1 500-2 500 մ) |
| Մեղմաթեք, քրավետ լանջեր, մասնատված V-աձև հովիտներով | ա) հորիզոնականին մոտ |
| Ափստվոր-քրավետ, բույլ մասնատված | բ) թեք, մասամբ աստիճանակերպ, չափավոր մասնատված (մինչև 2 500 մ) |

- ՉԵՎԵՐ
- Գետաձևիտներ
 - Կամիտներ և կիրճեր
 - Չափավոր տարածք
 - Կոմաձև լեռներ
 - Աշտարակաձև լեռներ
 - Կոմաձև բարձունքներ, մասամբ երաթխային խառնարաններով

Նկար 4

Լեռների ասիմետրիկ կառուցվածքը պայմանավորված է Ուրց-Հայոցծորի անտիկլինորիումի հյուսիս-արևելյան թևը հատող տեկտոնական խախտումներով, ինչի արդյունքում լեռնաշղթայի մի հատվածը ներկայացված է Միջին Արաքսյան ճկվածքի մաս իջեցված գրաբերով:

Լանջերի թեքությունների անկյունները տատանվում են հիմնականում $5-19^\circ$ սահմաններում, Վեդի և Կոտուց գետերի հովիտներում ձևավորվել են մեղմաթեք հարթավայրեր:




Նկար 5

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի՝ 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»: Այդ նորմերով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Այդ ցուցակում հանքավայրի տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է

գրունտի հորիզոնական արագացում $a = 0.3g$ /գրունտային սրվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/ (նկար 6):


ՍԵՅՍՄԻԿ ԳՈՏԻՆԵՐ

Գրունտի սպասվելիք արագացումների մեծություններով՝
 A , ազատ անկման g արագացման մասերով



Նկար 6

Տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Մուրակա սողանքային մարմինների և հայցվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում 7-8 կմ:




Նկար 7. Սողանքներ

2.3. Շրջանի կլիման

Տարածքի կլիման բնութագրվում է տաք, շոգ ամառով և ցուրտ անհողմնային ֆիզիկաաշխարհագրական պայմաններով, որտեղ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը՝ $+21^{\circ}\text{C}$ է, հարաբերական խոնավությունը՝ 35% է, լեռնահովտային քամիները՝ 2-3 մ/վրկ արագությամբ, իսկ հունվարին միջին ջերմաստիճանը՝ 0°C է մինչև -5°C , հարաբերական խոնավությունը՝ 60-70%: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ $+42^{\circ}\text{C}$, իսկ բացարձակ նվազագույնը՝ -32°C է: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 238-348մմ է: Գերակշռում են 0.8 մ/վրկ արագության արևմտյան և հյուսիս-արևմտյան ուղղության քամիները: Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է 35 սմ, ճնշումը՝ 50 կգ/մ²: Գրունտի սառեցման խորությունը՝ 41սմ:

Հայցվող տարածքը ներառված է բարեխառն, տաք ամառով կլիմայական գոտում (նկար 8):



Նկար 8

Ստորև բերված կլիմայական բնութագրերը (ջերմաստիճան, հարաբերական խոնավություն, տեղումներ) ներկայացվում են ըստ մոդակա Արարատ և Երասխի օդերևութաբանական կայանների բազմամյա դիտարկումների արդյունքների:

Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձ. Նվազագույն	Բացարձ. առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արարատ	818	-3.3	-0.3	6.5	13.3	18.0	22.4	26.2	25.8	20.9	13.7	6.2	-0.2	12.4	-32	42
Երասխ	802	-3.4	-0.5	6.4	13.5	18.2	22.6	26.6	26.1	21.4	13.9	6.6	-0.3	12.6	-28	42

Օդի հարաբերական խոնավությունը

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արարատ	818	78	71	61	56	55	49	45	45	49	61	72	79	60	66	29
Երասխ	802	-	-	-	57	55	48	46	44	48	60	-	-	-	-	-

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը ըստ ամիսների միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
														Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը,մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արարատ	16	18	25	35	35	23	10	6	8	18	21	16	231	35	28
	22	34	26	31	33	37	20	31	28	32	32	28	37		
Երասխ	19	18	27	30	36	23	9	6	8	20	24	18	238	-	-
	21	23	26	30	32	29	28	32	24	28	28	22	32		

Քանու պարամետրերը Արարատի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկը ստ ուղղությունների								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (15մ/վ օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Արարատ	818	Հունվար	16	3	8	18	10	5	11	29	50	1.3	1.9	18	25	27	29
			1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2							
		Ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2.3					
			2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8							
		Հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2.3					
			2.6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0							
		Հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1.5					
			2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5							

2.4. Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) համեմատությամբ:

2021 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գերնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2021 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 36274 նմուշառում, իրականացվել 29324 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Սուրենավանի տարածքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ ՊՈԱԿ-ի առաջարկած է համապատասխան ձեռնարկ-ուղեցույցից: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց շարքին է պատկանում Սուրենավանը (2700 բնակիչ), օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

Փոշի՝ 0.2 մգ/մ³;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Համաձայն մոնիթորինգի արդյունքների 2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում բարձրացել են հետևյալ աղտոտիչների պարունակությունները. Երևան՝ ազոտի երկօքսիդ, ծծմբի երկօքսիդ, փոշի և գերնամերձ օզոն, Գյումրի՝ ազոտի երկօքսիդ, ծծմբի երկօքսիդ և փոշի,

Ալավերդի՝ ազոտի երկօքսիդ, Հրազդան՝ ծծմբի երկօքսիդ, Արարատ՝ ծծմբի երկօքսիդ և փոշի, Կապան՝ ազոտի երկօքսիդ:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաները հիմնականում գերազանցել են ՍԹԿ-ն: Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Փոշով աղտոտվածության ՍԹԿ-ներից գերազանցումներ դիտվել են նաև Ալավերդի, Վանաձոր և Հրազդան քաղաքներում:

ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց



Նկար 9

2.5. Զրային ռեսուրսներ

Արարատյան արտեզյան ավազանը (ԱԱԱ) տեղադրված է Արաքս գետի միջին հոսանքում, Արարատյան գոգահովիտի սահմաններում, որը ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք շուրջ 120 կմ երկարությամբ և 10-30 կմ լայնությամբ: Գոգահովիտը գտնվում է երկրի մակերևույթից 800-1000մ բացարձակ բարձրությունների վրա, գրավում է շուրջ 1300 կմ² մակերես և իրենից ներկայացնում է ստորերկրյա ջրերի բնական շրջմարան, ուր ջրերը մուտք են գործում գոգահովիտը շրջափակող Արարատի և Արագածի լեռնազանգվածներից, Գեղամա և Հայկական պար լեռնաշղթաներից:

Արարաւոյան գոգահովիտն իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք, որը կապված է Արաքս գետի հովտի հետ, իր Ախուրյան, Սևջուր, Քասախ, Հրազդան, Ազատ, Վեդի վտակներով, որոնց արտաբերման կոներով և լավափակ հնանուններով էլ սնվում է Արարաւոյան սփորերկրյա ջրերի ավազանը:

ԱԱԱ սփորերկրյա ջրերի հոսքերը ձևավորվում են 31500 կմ² մակերես ունեցող Արաքս գետի ջրհավաք ավազանում, որից 14900 կմ² ՀՀ տարածքն է: Հոսքերը ձևավորվում են ի հաշիվ մթնոլորտային տեղումների, կոնդենսացիոն և մասամբ էլ մակերևութային ջրերի:

Արաքսը հանրապետության խոշորագույն գետն է: Անդրսահմանային գետ է, որի ավազանն ընդգրկում է Թուրքիայի, Հայաստանի, Իրանի և Ադրբեջանի տարածքը:

Ունի 1072 կմ երկարություն, որից 200 կմ կազմում է Հայաստանի և Թուրքիայի սահմանը: Հայաստանի գետերի մեծագույն մասը (որոնց ավազանները, միայն վերցված, կազմում են հանրապետության տարածքի 73.5 տոկոսը) պատկանում է Արաքսի ավազանին: Արաքսը վաղնջական ժամանակներից հանդիսացել է հայոց քաղաքակրթության կարևոր բնօրրաններից մեկը:

Արաքսի սնումը խառն է, հորդացումը՝ մարտից հունիս, առավելագույնը՝ մայիսին: Առաջին հորդացումը՝ մարտ-ապրիլ, կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը (ավելի բուռն)՝ մայիս-հունիս, լեռների ձնհալքի հետ: Ամենացածր մակարդակները լինում են հուլիս-օգոստոսին և ձմռանը: Երրորդ թույլ հորդացումը աշնանային անձրևներից է: Հորդացման ժամանակ Արաքսը մեծ ավերածություններ է առաջացնում, հատկապես Արարաւոյան, Միլիի ու Մուդանի դաշտերում: Հորդացումների ժամանակ Արաքսը միջին և ստորին հոսանքներում հաճախակի փոխում է իր հունը՝ միշտ շարժվելով դեպի հարավ:

Արարաւոյան ջրավազանային կառավարման տարածքը ընդգրկում է Արփայի (2306 կմ²՝ Զահուկ և հարակից այլ փոքր գետակների ավազանների հետ միասին), Վեդիի (1129 կմ² Արածոյի գետավազանի հետ միասին) և Ազատի (954 կմ², որի մեջ մտնում է Ազատի գետավազանը՝ 572 կմ² և Ազատ ու Վեդի գետավազանների միջև ընկած տարածքը՝ 382 կմ²) գետավազանները և կազմում է ընդամենը 4389 կմ²:

Արարապյան ՋՏԿ-ի գետերի բնական հոսքն Ազապ, Վեդի և Արփա գետավազաններում կազմում է 1177.0 մլն մ³, այդ թվում՝ էկոլոգիական թողքը՝ 133.5մլն մ³:

Արարապյան ՋՏԿ-ի Ազապ, Վեդի և Արփա գետավազաններում հաստատված՝ ստորերկրյա ջրային ռեսուրսների շահագործական պաշարները A+B կարգով կազմում են 7.882 մ3/վրկ և C1 6.69 մ3/վրկ: Խորքային հոսքը կազմում է 3.99 մ3/վրկ:

Շրջանի հիմնական ջրային երակը Վեդի գետն է, Արաքսի ձախակողմյան վտակներից: Սկիզբ է առնում Դահնակի լեռնաշղթայի ու Գնդասարի լեռնազանգվածի միջև գտնվող Մժկապար լեռների հյուսիսահայաց լանջերից՝ մոտ 2700մ բարձրություններից: Սկզբում հոսում է դեպի հյուսիս-արևմուտք, հետո ընդհանուր ուղղությունը արևմտյան է: Այս ընթացքում գետը ունի լեռնային բնույթ: Այնուհետև գետահովիտը լայնանում է, հոսքի ուղղությունը թեքվում դեպի հարավ-արևմուտք: Ի վերջո գետը դուրս է գալիս Արարապյան դաշտ ու թափվում Արաքսը: Երկարությունը մոտ 58կմ է, ջրահավաք ավազանի մակերեսը 633կմ2: Ձախակողմյան խոշոր վտակը Շաղափն է: Աջակողմյան՝ 10կմ-ը գերազանցող վտակները չորսն են, որոնցից մեկը Խոսրովն է: Սնումը հիմնականում ձնանձրևային է, հորդացումը գարնանը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը իրականացնում է Վեդի գետի ավազանի մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի և քանակի մոնիթորինգ:

Վեդի գետի ջրերի որակի մոնիթորինգի դիտակետերը գտնվում են No82-ը Արարապ քաղաքից 2կմ ներքև և No80-ը՝ Ուրցաձոր գյուղից վերև: 2022 թվականի 2-րդ եռամսյակի դիտարկումների տվյալներով Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Արարապ քաղաքի հատվածում ջրի որակը ապրիլին եւ մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր: Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:


Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վարթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ: Սպորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 119 սպորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 25 շարվածանող հորատանցք, 47 չշարվածանող հորատանցք և 47 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Արարատյան արտեզյան ավազանում առանձնացվում են 3 ջրատար շերտ, որոնք միմյանցից մեկուսացված են որոշակի երկրաբանական պայմաններով: Ամենախորը՝ երրորդ հորիզոնն է, որն ընկած է 90-400 մետր խորության վրա: Երկրորդ հորիզոնն ընկած է 30-70 մետր խորության վրա, իսկ առաջինը՝ 20-30 մետր խորության վրա: Առաջին և երկրորդ հորիզոնների ջրերն ամենավարքիմիական կազմ, բարձր հանքայնացում և բարձր կոշտություն ունեցող ջրերն են, որոնք պիտանի չեն խմելու համար: Իսկ մինչև 20 մետր խորության վրա գտնվող ջրերը գրունտային, դրենաժային ջրերն են, որոնք ազատ կարող են օգտագործվել ոռոգման և այլ նպատակներով: Տեղամասում և հարակից տարածքներում սպորերկրյա ջրեր բացահայտվել են 2-3մ-ից սկսած:

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք Արարատյան ԶԿՏ-ում սպորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Մալիշկա (N502), Կեչուր (N2060), Գառնիի (N2045, N2046) բնակավայրերի դիտակետերում նկատվել են ծախսի իջեցումներ: Ագարակաձորի (N785) դիտակետում նկատվել է ծախսի կայուն վիճակ: Արարատյան արտեզյան ավազանի հարավարևելյան մասում գտնվող Եղեգնավանի N2065, Արարատի N2076

դիտարկելու են մակարդակի իջեցումներ: N2064, N2069 չշարժված հորատանցքերում նկատվել է ջրի մակարդակի իջեցում: Ծախսի բարձրացումներ են դիտվել Արտաշատի N2062 և Դալարի N2063 շարժված հորատանցքերում: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 10 դիտարկելու: N2067 դիտարկելու հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերում նիտրատների պարունակությունը




Նկար 10

2.6. Հողեր

Արմաշ համայնքի հողերը գորշ կիսաանապատային հողեր են: Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուրակ, տեղակուրակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրաքարայինների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստորուկտուրան փոշե-հատիկային է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր:

Նախատեսվող գործունեության տարածքում հողի բերի շերտը բացակայում է: Տարածքի վերին շերտի ապարները ներկայացված են բարակ հողաբուսական տղմակավային շերտով և 0.7-2.5մ հզորության կավավազային նստվածքներով:



Նկար 11

2.7. Բուսական և կենդանական աշխարհ

Բուսական աշխարհ

Հայկող տարածքում տարածված է հիմնականում տափաստանային տարախոտային բուսականությունը, որի կազմում զգալի մաս են կազմում վաղամեռ բուսատեսակները (նկար 11):

Սուրենավանի տարածաշրջանի բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին, որտեղ յուրահատուկ են կիսաանապատային և անապատային բուսականությունը:

Տարածքի բնական բուսածածկը ներկայացված է հիմնականում կիսաանապատային բուսականությամբ՝ օշինդրա-էֆեմերային մասնակցությամբ, որոնցից որպես դոմինանտ հանդիսանում են /*Artemisia fragrans* Willd, *Kochia prostrata*, *Schrad Aegilops* և այլն/:

Տարածքում առկա է ջրային և ջրամերձ բուսականություն, որը դրենաժային առուների և արհեստական ջրավազանային համակարգերի ստեղծման արդյունք է: Տեսակային բազմազանության առումով տարածքին բնորոշ են՝ Վարդազգիների -


Rosaceae, Հացազգիների - *Poaceae*, Բարդաձաղկավորների - *Asteraceae*,
Լոբազգիների - *Fabaceae*, Մափիտեղազգիների - *Polygonaceae* և
Խաչաձաղկավորների - *Brassicaceae* ընտանիքները: Ծառերը բացակայում են, որը
հավանաբար պայմանավորված է գրունտային աղի ջրերի մոփկությամբ և օդի
չորությամբ:

Դիտարկվող տարածքում պահպանության կարիք ունեցող բուսատեսակներից
են՝ իշակաթնուկ Վեդու-*Euphorbia vedica*, Խնկեղեգ ճահճային- *Acorus calamus* L.,
Պատարուկ փոփոխական-*Convolvulus commutatus* Boiss, Կաթնուկ Թախտաջանի-
Lactuca Takhtadzani Sosn, Գազ տարօրինակ- *Astragalus paradoxus* և այլն:

Հայաստանի Հանրապետության Բույսերի Կարմիր գրքում (2010) որպես
վտանգված (EN) տեսակներ հարակից տարածքում հանդիպում են՝ օշան
Թամամջյանի (*SALSOLA TAMAMSCHJANAE*), կարմրան ութառեջանի (*TANARIX*
OCTANDRA) խանձիլ հաղարջի (*Rheum ribes* L.) կատեգորիա CR B 1 ab(iii, iv) + 2
ab(iii, iv) կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Չնայած այս տեսակները
հետազոտվող տարածքում մեծ թիվ են կազմում, սակայն Հայաստանում հազվադեպ
են հանդիպում:

Վայրի օգտակար բուսատեսակներից հարակից տարածքում հանդիպում են՝
Տարկավան սովորական- *Tanacetum vulgare*, Տորոն ներկատու-*Rubia tinctorum*,
Կատվախոտ դեղատու-*Valeriana officinalis*, սպանդ սովորական-*Reganum harmala*:

Անմիջապես աշխատանքների վայրում բուսածածկ չկա:



- | | |
|---|--|
| <p>Լեռնաբերդի բուսականություն</p> <p>10 Ֆրիգանիդ բույսերի մասնակցությամբ՝ <i>Amygdalus fenziana</i> (Fritsch) Lipsky, <i>Cercas incana</i> (Pall.) Spach, <i>Rhamnus pallasii</i> Fisch. et Mey., <i>Celtis glabrata</i> Stev. ex Planch. տեսակներ մասնակցությամբ <i>Astragalus</i>, <i>Acantholimon</i>, <i>Acanthophyllum</i>, <i>Onobrychis cornuta</i> (L.) Desv., <i>Salvia dracocephaloides</i> Boiss., <i>Thymus kotschyanus</i> Boiss. et Hohen.</p> <p>11 Օշինդրա-էֆեմերային, մասնակցությամբ՝ <i>Artemisia fragrans</i> Willd., <i>Kochia prostrata</i> (L.) Schrad., <i>Capparis spinosa</i> Willd., <i>Ceratoides papposa</i> Botsch. et Ikonn., <i>Atraphaxis spinosa</i> L., <i>Rhamnus pallasii</i> Fisch. et Mey., <i>Tanacetum argyrophyllum</i> (C. Koch) Tzvel., <i>Poa bulbosa</i> L., <i>Bromus</i>, <i>Aegilops</i>, <i>Eremopyrum</i>, <i>Alyssum</i>, <i>Aeluropus littoralis</i> (Gouan) Parl.</p> | <p>Անապարային բուսականություն</p> <p>12 Հալոֆիլ, մասնակցությամբ՝ <i>Salsola ericoides</i> Bieb., <i>S. dendroides</i> Pall., <i>S. nitaria</i> Pall., <i>Halocnemum strobilaceum</i> (Pall.) Bieb.</p> <p>Դաշնային բուսականություն</p> <p>16 Կոմունա-հիդրոֆիլ, մասնակցությամբ՝ <i>Juncus acutus</i> L., <i>Iris muscivora</i> Fourn., <i>Glaux maritima</i> L., <i>Isula aucherana</i> D. C., <i>Microcnemum coralloides</i> Wedg., <i>Thesium lycanicum</i> Borum, <i>Linum barseghianii</i> Ciabr. et Ditr., <i>Sonchus arataulica</i> Nazar. et Burs., <i>Merendera sobolifera</i> C. A. Mey., <i>Sphaerophysa salsola</i> (Pall.) D. C.</p> <p>Գյուղատնտեսական ակտիվ օգտագործվող (վարկառու, բազմաշա տնկարկ) տարածքներ</p> |
|---|--|

Նկար 12

Կենդանական աշխարհ

Հետազոտվող տարածքը գտնվում է աղուտային կիսաանապատների գոտում, սակայն շրջապատված է արհեստական ջրամբարների ցանցով, ինչն ապահովում է այս տարածքի կենդանական աշխարհի զգալի բազմազանությունը: Անողնաշար կենդանիներից տարածաշրջանում դիտարկվել են փափկամարմինների հետքայլ տեսակները՝ *Zonitoides nitidus*, *Planorbis planorbis*, *Gyraulus acronicus*, *Pupilla signata*, միջատներից ճպուռների կարգի՝ *Coenagrionidae* և *Libellulidae* ընտանիքների ներկայացուցիչներ: Ողնաշարավորներներից դիտարկվել են երկկենցաղների երկու տեսակներ՝ կանաչ դոդոշ (*Bufo/Pseudopedalia/ variabilis*) և լճագորտ (*Pelophilax ridibundus*), որոնք պատկանում են հանրապետության տարածքում լայնորեն տարածված և մեծաթիվ տեսակների թվին:


Տարածաշրջանում հանդիպող կաթնասունների տեսակային կազմում ընդգրկված են՝ Լայնականջ ոզնի *Erinaceus (Hemiechinus) auritus* Gmelin, Սրականջ գիշերային չղջիկ *Myotis blythi* Tomes, Միջերկրածովային չղջիկ *P. (P) kuhli* Kuhl, Փոքր պայտաքիթ *Rhinolophus hipposiderus* Bechst, Աղվես *Vulpes vulpes* L., Շնագայլ

Canis aureus, Գայլ *Canis lupus* L., Ջրասամույր *Lutra lutra*, L., Եվրոպական նապաստակ *Lepus europaeus* Pall., Վայրի խոզ *Sus scrofa* L., Պարսկական ավազամուկ *Meriones persicus* Blanf. Մոխրագույն համստերիկ *Cricetulus migratoris* Pall. և այլն:

Կարմիր գրքում գրանցված տեսակներից տարածքում հանդիպում են՝ Գեղանի կոունկ - *Anthropoides virgo* L., Ծովային քարադր-*Charadris alexsarinus* L. Հայկական որոր-*Larus armenicus* Buturlin, Ջրարծիվ-*Pandion haliaetus* L. Մոխրագույն սագ-*Anser anser* L, Կարմիր բադ-*Tadorna ferruginea* Pall. Կանաչ մեղվակեր-*Merops Superciliosus* L., Ներկարար-*Coracias garrulus* L և Ունացուպիկ *Himantopus* *Himantopus* (Linnaeus, 1758) թռչունը:

Կաթնասունների հետևյալ տեսակները նույնպես գրանցված են ՀՀ Կարմիր գրքում՝ Լայնական ռզնի *Erinaceus* (*Hemiechinus*) *auritus* Gmelin, Խայտաքիս *Vormela peregusna* Guldenstaedt, Դալի ավազամուկ *Meriones dahli* Shidl Փոքր ճագարամուկ *Allactaga elater* Liichtenstein:

Բնապահպանական նախնական զննությամբ պարզվել է, որ նախատեսվող գործունեության տարածքներում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով:



Նկար 13

ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿՆԵՐ

-  Վայրի խոզ
-  Եղեգնակատու
-  Նապաստակ
-  Գյուրգա
-  Ճահճակուղբ
-  Շնագայլ
-  Միջերկրածովյան կրիա
-  Թխակապույտ աղավնի

2.8. Վերանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Սուրենավանի տարածաշրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ) չկան:

Մոտակա ԲՀՊՏ-ը «Խոսրովի անտառ» պետական արգելոցն է, որի հեռավորությունը հայցվող տարածքից կազմում է շուրջ 34 կմ (նկար 13):

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա: Այն զբաղեցնում է 23213.5 հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մոտ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ:

Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարավանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (*Ursus arctos syriacus*), բեզուարյան այծի (*Capra aegagrus*), կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում:

Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսականեր, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Հայցվող տարածքից մոտ 16կմ (նկար 13) հեռավարության վրա է գտնվում մեկ այլ բնության հատուկ պահպանվող տարածք՝ «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, որտեղ բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է։ Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար։ Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/։ Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույսեր։ Էնդեմիկ ներկայացուցիչներից են *Salsola tamamschjanae*, *Acantholimon araxanum*։ Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ։ Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ։ Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզներ։

Հայցվող տարածքից շուրջ 20կմ հեռավորության վրա է գտնվում «Խոր Վիրապ» պետական արգելավայրը (նկար 13), որը ստեղծվել է 2007 թվականին Արարատի մարզի Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար խոնավ տարածքի վրա։

Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքի էկոհամակարգի, բուսական ու կենդանական աշխարհի՝ հատկապես ջրլող թռչունների ու դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների ու դրանց աճելավայրերի պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումն է։

Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են։



Նկար 14

«Խոր վիրապ» պետական արգելավայրի ջրաճահճային տարածքներում արձանագրվել են Կենդանիների կարմիր գրքում գրանցված վարդագույն և գանգրափեթուր հավալուսնը, փոքր ձկնկուլը, թշնան կարապը, մոխրագույն սագը, կարմիր բադը, սպիտակաաչք սուզաբադը, ծովային քարադրը, սպիտակապոչ եղջյուրիկը, որորակտուց ջրածիծաղը, սոխականման ճոկահավը:

Հայցվող տարածքի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վրանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ:

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Հ/հ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
Երկրաբանական հուշարձաններ		
1.	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտումյանի գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
Կենսաբանական հուշարձաններ		
1	«Աղակալած ճահճույր»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այսպեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

2021թ. մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 10.7 %,
- գյուղատնտեսություն 15.1 %,
- շինարարություն 7.7 %,
- մանրածախ առևտուր 4.2 %,
- ծառայություններ 1.5 %

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մեքանիզմների արտադրությունն այլ ոչ մեքանիզմական հանքային

արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը.

ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն),

բ) ծխախոտային արտադրատեսակների ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա),

գ) հիմնային մետաղների արտադրություն

դ) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ասբոցեմենտի և այլնի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 72% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 7.6%-ը: կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք: Հանրապետությունում և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բանջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը:

3.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Հայցվող տարածքը ներառված է Արարատ քաղաքային համայնքի վարչական տարածքում: 01.01.2022 թվականի դրությամբ Արարատի բնակչությունը կազմել է 20.4հազ. մարդ, մակերեսը 27.69 կմ²:

Արարատ քաղաքը տեղադրված է Միջինարաքսյան գոգավորությունում, ծովի

մակարդակից 818մ բարձրության վրա: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 աստիճան: Նվազագույն ջերմաստիճանը դիտվել է -30 աստիճան: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 200-250մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտների: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում, առանց որի անհնար է երկրագործությունը: Ունի օգտակար հանածոներ, դրանցից առավել նշանավոր են մոտակա Սալակիթ լեռան կրաքարը: Շրջակայքում կան կվարցի և օնիքսային սև մարմարի պաշարներ, որի մշակումից ստացվում է դեկորատիվ սալիկներ: Քաղաքի մոտ է գտնվում հիդրոկարբոնատակալցիումային հանքային բուժիչ ջուրը:

Ունի դպրոցներ, գրադարաններ, մանկապարտեզներ, երաժշտական դպրոց, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց: Տնտեսության տեսակետից քաղաքի մասնագիտացման ճյուղը ծանր արդյունաբերությունն է: Այստեղ գտնվում է հանրապետության երկու ցեմենտի գործարաններից մեկը, որը ստեղծվել է տեղի կրաքարի հարուստ հանքավայրի հիման վրա: Արտաքին քաղաքականության բարենպաստ պայմանների դեպքում Հայաստանը կարող է դառնալ Հարավային Կովկասին և Մերձավոր Արևելքին ցեմենտ մատակարարող միջազգային կենտրոն: Ցեմենտի գործարանին կից կառուցվել է ոսկու կորզման ֆաբրիկան, ընդ որում միակը Հայաստանում: Այստեղ բերվում և վերամշակվում է Սոթքի և Մեղրաձորի ոսկու հանքաքարը: Քաղաքում կան նաև գինու-կոնյակի և պահածոների արդյունաբերության ձեռնարկություններ, որտեղ արտադրվում է գինի, կոնյակի սպիրտ, մրգերի, բանջարեղենի պահածոներ: Ունի զարգացած գյուղատնտեսություն: Այստեղ գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն խաղողի, պղպուտի այգիները, վարելահողերը: Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև կաթնամսատու ուղղության անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Արարապ քաղաքում ցեմենտի և ոսկու գործարաններով պայմանավորված աղտոտված է մթնոլորտային ավազանը:

Սուրենավան գյուղը գտնվում է Արարապի տարածաշրջանում, Արարապ քաղաքից 9 կմ հարավ-արևելք: Մարզկենտրոնից գտնվում է 22 կմ հեռավորության վրա: Սուրենավանի բնակչությունը 01.01.2022թ. դրությամբ կազմում է 2 606 մարդ, մակերեսը՝ 27.69կմ²:

Գյուղը տեղադրված է Արարապյան դաշտի արևելյան եզրին, Ուրծի լեռնաշղթայի հարավային նախալեռներում: Ծովի մակարդակից ունի 815 մ բարձրություն: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -3-ից -5 աստիճան: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42աստիճան: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապայտներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում:

Գյուղը ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, ծննդատուն, բուժկետ, կապի հանգույց: Տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 2308հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 1232հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ, համապատասխանաբար կազմելով 78հա և 172հա: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուսականային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Համեմատաբար ընդարձակ մակերես են զբաղեցնում արոտավայրերը՝ շուրջ 568 հա: Կան խոտհարքեր: Բնակչությունը զբաղվում է կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի: Գյուղի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

3.3 Պատմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 22-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Արարատի համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Ստորև բերված են Արարատ քաղաքի և Սուրենավան գյուղի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը.

Հուշարձանը	Ժամկետը	Գտնվելու վայրը
Արարատ քաղաք		
ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	մթա 2-1 հզմ	քաղաքից 1 կմ հս
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲԻ	1992թ.	քաղաքի մեջ
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀԱԾՆԵՐԻՆ	1985թ.	քաղաքի մեջ
Սուրենավան գյուղ		
ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻ		մշակույթի տան դիմաց

Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում առաջացող ռիսկեր՝ վերոհիշյալների և պատմական միջավայրի անվտանգության ու անխաթարության տեսանկյունից չեն առաջանում, քանի որ տեղամասը գտնվում է բավականին հեռու նշված պատմամշակութային արժեքներից:

Աշխատանքների ընթացքում նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի 438 որոշման 43-րդ կետի որոշման պահանջներով՝ մասնավորապես՝ <<Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին>>

4.. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասում ծրագրավորվող աշխատանքների ընթացքում մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա հնարավոր է հետևյալ բացասական ազդեցությունների դրսևորումը:

Մթնոլորտային օդ.

Տեղամասի տարածքում վնասակար գազերի և փոշու արտանետումները կապված են լինելու հիմնականում ավտոտրանսպորտի տեղաշարժի հետ: Հետախուզահորերի անցման ժամանակ փոշու արտանետումներ չեն լինելու, քանի որ ավազակոպճային կուտակը՝ ջրերի կապիլյար ներծծման հաշվին, գտնվում է ջրահագեցած վիճակում:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի մոտակա բնակավայրերում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատասխանաբար չափերի գերազանցեն 5մգ/մ^3 , 0.2մգ/մ^3 , 0.15մգ/մ^3 և 0.5մգ/մ^3 : Նախնական գնահատականներով, տեղամասի սահմաններում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով առաջանալու է 0.0079գ/վրկ փոշի, ինչը չի գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Ջրային ավազան

Քանի որ տեղամասը ծագումնաբանորեն կապված է Արաքս գետի ստորին դարավանդի լճային-աալյուվիալ նստվածքների հետ, ապա ավազի կուտակը մասամբ ջրակալված է, ինչը պայմանավորված է ջրերի կապիլյար ներծծմամբ:

Դրա վրա ազդեցություն աշխատանքների ընթացքում չի դրսևորվելու, քանի որ պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում, հետախուզահորերը անցվելու են մեխանիկական շերտփման եղանակով և փաստագրման, նմուշարկման

աշխատանքներից հետո անմիջապես կատարվելու է դրանց հետլցում: Տեխնիկական միջոցները տարածք են մտնելու գոյություն ունեցող ճանապարհներով:

Ուսումնասիրության թույլտվություն ստանալու դեպքում, դաշտային աշխատանքների ընթացքում ինչպես խմելու այնպես էլ տեխնիկական նպատակով օգտագործվելիք ջուրը կբերվի, ջրօգտագործման համապատասխան պայմանագրերի համաձայն, ջրօգտագործման թույլտվություն ունեցող մոտակա որևէ բնակավայրից:

Հողային ծածկույթ

Հողային ծածկույթի վրա դրսևորվելու է որոշակի ազդեցություն՝ կապված հետախուզահորերի անցման հետ: Հողաբուսական շերտը խախտվելու է 37.5 մ² մակերեսի վրա:

Հողերի խտացում, տրորում առաջանալու է մեխանիզմների տեղաշարժի հետևանքով :

Ենթակառուցվածքներ՝ արտադրական հրապարակ, լցակույտ և այլ, չի նախատեսվում :

Բուսական և կենդանական աշխարհ

Հետախուզման աշխատանքների բացասական ազդեցությունը հայցվող տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է:

Երկրաբանական ուսումնասիրության տեխնոլոգիական գործընթացը բացառում է ագրեսիվ նյութերի կիրառումը, չեն նախատեսվում նաև հորատապայթեցման աշխատանքներ:

Բուսականության վրա բացասական ազդեցություն գրեթե չի դրսևորվելու, քանի որ տարածքում չկա համատարած բուսածածկ, դիտարկված՝ մեկուսի թփերի տեսքով աճող բույսերը հանդիսանում են անապատային-կիսաանապատային աղասեր բուսականության բնորոշ տեսակ:

Տեղամասի սահմաններում խոշոր կաթնասունների բներ, որջեր չեն արձանագրվել: Առկա են դաշտային մկների բազմաթիվ լքված բներ, թռչունների բնադրման վայրեր: Կենդանական աշխարհի վրա առավել ազդեցիկ, կարճաժամկետ գործոնը կապված է լինելու աղմուկի հետ:

Տեղամասում չեն արձանագրվել նաև ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության ազդեցությունը տարածքի կենսաբազմազանության վրա լինելու է նվազագույն :

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով.

Հայցվող տարածքի երկրաբանական ուսումնասիրության արդյունքում ընդերքօգտագործման թափոններ չեն ձևավորվում, քանի որ հետախուզական փորվածքներից հանված ավազային նյութը, նմուշարկումից հետո, անմիջապես ետ է լցվելու, մեքենաների սպասարկումը կատարվելու է ուսումնասիրության համար հայցվող տարածքներից դուրս՝ արտադրական տարածքներում, որտեղ ապահովված են անհրաժեշտ պայմանները քայուղերի, յուղերի, տարատեսակ նավթամթերքների անվտանգ պահման և օգտագործման համար:

Աշխատանքների ընթացքում առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ (օրական 10կգ ոչ ավել), որը ներկայացված է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից և պոլիմերներից: Թափոնը հաշվառված է 91200400 01 00 4 ծածկագրով :

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ մոտակա պահպանվող տարածքները՝ «Խոր Վիրապ», «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերը գտնվում են տեղամասի կենտրոնից համապատասխանաբար մոտ 20կմ, 16կմ հեռավորությունների վրա:

Պատմության և մշակույթի հուշարձաններ

Արարատ քաղաքի, Սուրենավան գյուղի պատմության և մշակութային հուշարձանները գտնվում են հայցվող տարածքից համապատասխանաբար 10կմ և 2կմ հեռավորության վրա:

Բուն տեղամասի տարածքում պատմամշակութային հուշարձաններ չկան, տեղամասը չի համընկնում նաև հուշարձանների պահպանության գոտիների հետ, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա:

Աղմուկ և թրթռումներ

Համաձայն ՍՆ-245-71 սանիտարական նորմերի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման տարածքների համար սանիտարական պահպանման գոտի սահմանված չէ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից Արարատ, Վեդի կամ Սուրենավան բնակավայրերում, համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:

- Նավթամթերքների պահեստավորում և պահում հայցվող տարածքում չի կատարվելու:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, անհրաժեշտության դեպքում աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

- Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

- Խախտված հողատարածքների վերականգնման աշխատանքները կատարվելու են ձեռքով՝ III կարգի ապարներով:

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման

հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

- վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմինն.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1. Առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2. Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վարթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

1-ին և 2-րդ կետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի

վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Երկրաբանական քարտեզագրման, երթուղիների կադարման ժամանակ տարածքի դիտարկում թռչունների բների հայտնաբերման նպատակով : Առկայության դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների տարածքից դուրս :

Աշխատանքներին մասնակցող մասնագետների իրազեկում տեղամասի տարածաշրջանում հայտնի ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ :

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Երևական փարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը ներկայացվում է ստորև.

1 Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

2.Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող փարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°: Երևական փարածքի բարձրությունը փափանկում է 795-800մ-ի սահմաններում:

Տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինների և հայցվող տեղամասի միջև նվազագույն հեռավորությունը կազմում 7-8 կմ:

Հետևաբար, սողանքային երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակ տեղամասում լինել չի կարող:

3. Տեղամասում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

Երկրաշարժ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայվող փարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ2 գրունտի հորիզոնական արագացման մեծությունը (նկար 6):

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վրանգավոր փարածքներից աշխատակիցների ապահով փարհանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ :

Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

4. Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ): Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների ի հայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատրաստվում են արտադրական հրապարակում տեղադրված վագոն-տնակում:

5. Երևակման տարածքում անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՊԼԱՆ

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,

2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով տեղամասի տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,

3. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում):

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :


Կենսաբազմազանության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից պայմանագրային հիմունքներով:

Սրացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 120.0հազ.դրամ:

Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում են ստորև.

Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մոլոր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն,	Աշխատանքների իրականացման վայր, շաբաթական մեկ անգամ
Հողային ծածկույթ, տեղամասի տարածք, աշխատանքների իրականացման վայր	Հողերում նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Տեղամասի տարածք, ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. տեղամասի հարակից շրջան	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տեղամասի և հարակից տարածքներ, տարեկան մեկ անգամ



Նկար 14. մոնիտորինգի կետերի տեղադիրքը



Նկար 15. Հեռավորությունները զգայուն կլանիչներից

- գ. Սուրենավան 2.9կմ
- գ. Արմավիր 3.0կմ
- գ. Երևան 5.8կմ
- գետ Արաքս 2.4կմ
- Կարպաճային տնտեսության գրասենյակ 0.3կմ
- Երևան-Կապան-Մեղրի ավտոմայրուղի 1.9կմ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայք

Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.

Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.

Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.

Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР

Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954

“Флора и растительность рек и озер Армении и их народнохозяйственное значение”. А.М. Барсегян

“Растительность Армянской ССР”. Магакьян А.К.

“Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван

“Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.


“Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>

ՀՀ Արարարի մարզպետարանի պաշտոնական կայք

Բնապահպանական միջոցառումների ծրագիր

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ	Մեղմման համար պատասխանատու
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	- աշխատողներն ապահովովվում են համազգեստով և Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - սարքավորումների շահագործվում են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցները իրազեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ - Զգուշացնող նշանների տեղադրում	- Աշխատողները պետք է կրեն համազգեստ և համապատասխան ԱՊՄ - սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չպետք է արձանագրվեն	«Սան փաուեր սոլար» ՍՊԸ տնօրեն
2. Հետախուզահորերի անցման աշխատանքներ	Օդի աղտոտում փոշիով և արտանետումներով	- Փոշեգոյացման կանխում երկրաբանական ուսումնասիրության ժամանակ - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Օգտագործվող տեխնիկան	- Ճանապարհների ջրցանում - աշխատանքների կատարման վայրում բացառել նյութերի/ թափոնների բաց այրում - տեխնիկան և մեքենաները	ինժինե-րերկրաբան

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ	Մեղմման համար պատասխանատու
		պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները	շահագործել առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքների բացակայություն	
	Աղմուկ	- Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում	- Աշխատանքային ժամերից հետո աշխատանքների բացառում - սարքավորումները պետք է լինեն բավարար տեխնիկական վիճակում	Ինժեներ-երկրաբան
3. Կենցաղային թափոնների գոյացում	- Աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում	տարածքում զուգարանի տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն	Սպասարկող անձնակազմ



Հայցվող տեղամասի դիրքը